

Ե . Թ Ո Փ Ձ Ե Ա Ն Ի

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐԳԻԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Գրքիս վերնագիրը՝ արդէն իսկ ընչ շատ ծանօթ շեշտ մ'ունի հայ ականջներուն։ 283 էջերէ բաղկացած այս հատորը՝ որքան կարեւոր, նոյնքան հետաքրքրական կ'ընծայէ թուրքիոյ ազատութեան! այս որեւորուն՝ տեսնել անոր սկիզբէն մինչև հիմայ դէպ ի քայքայումն ունեցած ձգտումները և անոր վերջին քանի մը պետերուն քաղաքական և կառավարչական գործունէութիւնը, որ անցեալի և ներկայի սև ու տխուր գիտակցութիւնը միայն կը թողու։

Պ . Հեղինակը լոկ համառօտ ակնարկ մը կը ձգէ թուրքիոյ անցեալ պատմութեան վրայ, բաւական համարելով սուլթաններու ցանկը միայն. նոյնպէս, հակիրճ, բայց գոհացուցիչ ծանօթութիւն մը տալով թուրք կրօնքին վրայօր՝ շուտով կ'անցնի բուն իսկ իր նիւթին։

Երիտասարդ թիւրքիական և Հայերն՝ ժիժ և ի զարեւու թուրքիոյ ամենատրոշ ներկայացումն է իր ողբալի իրականութեան մէջ։ Բռնակալներու ճիրաններուն ներքև հեծեծող երկրի մը ինքնատիպ պատկերն է այս։ Աշխարհագրական, տնտեսական և քաղաքական մանրամասնութիւնները՝ զորս հեղինակը կը հաստատէ օտար գիտնականներու և պաշտօնական անձերու գրութեանց բազմաթիւ վկայութիւններով, այս երկիս շատ գնահատելի արժէք կու տան և որուն ամենէն զբաւիչ էջերէն կրնայ համարուիլ հարկահանութեան օրէնքը, եթէ կարելի է ասիկայ օրէնքը ըսել թուրքիոյ համար։ Մէկը՝ թէ որ առանց երբէք ուրիշ էջեր թափառելու ակնարկ մը տայ այս անգութ կեղեցումին վրայ, դիւրաւ պիտի ըմբռնէ թուրքիոյ յառաջդիմութիւնը նաև մարդկային զգացմանց նկատմամբ. ժիժ և ի զարեւր կրնան իրր ամենաստույգ ապացույցներ հանդիսանալ՝ ճակատագրին ձեռքով կտրցած բռնակալ կառավարութեան։

Հարկահանութենէն ճնշուողը քրիստոնեայ ժողովուրդն է և մանաւանդ Հայը՝ քանի որ բռնակալութեան արիննաքամ

սրտին մէջ կաշկանդուած է, որով յարգելի Հեղինակս, աւելի մանրամասն դէպքերով դուրս կը ցատկեցնէ տառապանքը Հայուն որ իր երեք կարգ հարկահաններու ձեռքով, տէրութենէն, անոր պաշտօնեայէն և քիւրտ խուժանէն կը թալլուի ու կը կեղեքուի միշտ։

Անցեալ դարու թուրքիոյ զլխաւոր դէպքերը, սուլթան Մահմուտի բարենորոգութեան ունեցած անօգուտ ճիգերը, անոր հրովարտականքը, որոնք երբեք չեն գործադրուած, կարգաւորեալ ոճով և հետաքրքրելի մղումով կ'անցնին մեր առջևն. ընթերցողն՝ նաև պայծառ և հարուստ գաղափար մը կը ստանայ Միգհատեան Սահմանադրութեան և զանիկայ ստեղծող մեծանուն փաշայի գործունէութեան և եղբրական մահուան վրայօր։

Գրքիս վերջին մասին մէջ՝ Հոսանքներ հայկական եերքի կեանքում վերնագրին ներքև՝ Հեղինակս թուրքիոյ ընդհանուր կացութենէն իր ուշադրութիւնը՝ նաև ուղղակի հայութեան վրայ դարձնելով, հոն վառվռուն գոյներով կը նկարագրէ անոր կեանքը, բռնած դիրքը օսմանեան տէրութեան ներքև, և թուրք նախապաշարեալ հոսանքին մէջ անոր դէպ ի զարգացում ունեցած ապարդիւն ջանքերը և նոյնիսկ այլ և այլ հալածանաց մէջ՝ կրօնական երկպառակութեամբ զիրար ոչնչացնելու տենդով բուրբոցած հրդեհը. «Մի և նոյն ժողովրդի երկու հատածները ամենաստոր վիշտներով էին պայքարում միմեանց դէմ, մասնութեամբ, զրպարտութեամբ էին իրար փնասել աշխատում։ Եւ այսպէս տարինք շարունակ»։ Թրքահայ զլխաւոր դէպքերն ինչպէս Զեյթունի դիպագնոթիւնը, Հայկական Սահմանադրութիւնը, եռուգեռ նկարագիր մ'ունին։ Այս շրջանին մէջ դուրս կը խոյաւնայ հոգեկարգի ցնցումներէն ոգեւորուած վապուրակահի Արթուր։ Պ . Թոփչեան իր գեղեցիկ էջերէն նուիրած է ճառախօս եւրիտասարդ Խրիմեանին ևս հոր այնպէս ազդու ձեռքով հնչեցնում էր բուն ժողովրդի ցաւոտ միմունջներ երկրից կտրուած պուսնցինքի ականջին, պատկերացնում էր

Թուրքահայ գաւառները տառապանքը այնպէս ցայտուն գոյներով: Ազգային ամիրաններու և էֆէնտիներու՝ արհեստաւոր դասին դէմ ունեցած ատելութիւնը և ջլատիչ ձգտումները, պոլսեցոյ ցուրտ անտարբերութիւնը հայ գաւառացիներուն նկատմամբ՝ տխուր յիշատակներու հնչուն արձագանգներն են:

Պ. Թոփչեան, գլխաւոր՝ կը ճոխանայ սուլթան Համիտի քաղաքականութեան վրայօք, ցոյց տալով անոր կատարած դերը 1876 էն իվեր, կը խօսի նաև Ալեքեյեան հարցին նկատմամբ: «Հայկական Տառապանքը» Հայոց ջարդը՝ զանազան ապացոյցներով և տեղեկութիւններով հաստատելով կը նկարագրէ: Հեղինակս՝ իր այս երկը կը հասցնէ Միղհատ փաշայի սպաննուելէն ետքը, մինչև անոր կուսակիցներուն, երիտասարդ Թուրքներուն, Եւրոպացուիլը և Թուրք նոր հոսանքներու կազմակերպութիւնը. նոյնպէս կ'ականարկէ զանազան հայ հաստատութեանց հիմնարկութիւնը և նորանոր հոսանքներու կազմակերպութիւնը: Յարգոյ Թոփչեան կը խոստանայ զրքիս շարունակութիւնը նաև՝ (Բ. Մասը) ի լոյս ընծայել, որուն առարկայն պիտի ըլլայ այս նոր հոսանքներու գոյութիւնը, ինչպէս որ ինքը կ'ըսէ. «Տեսնենք ուրեմն թէ միևնոյն պայմաններում, տարբեր ժամանակներում և տարբեր ուժգնութեամբ ծնունդ առած հայկական և թիւրքական այդ հոսանքները ի՞նչ ուղիով են հասել ներկայ օրերին, ի՞նչ ելևէջներ են ունեցել և ի՞նչ չափով շփուել ու գործակցել են միմեանց»: Փափագելի է օր մ'առաջ՝ առաջնոյն՝ երկրորդ մասն ալ կից տեսնել այս գործոյս. անտարակոյս աւելի թարմ և հետաքրքրական պիտի ըլլայ, քանի որ ներկայ կեանքէն պիտի խօսի՝ ազատութեան գաղափարը իրականացնող այդ հոսանքներու:

Բ* Ե. Ե.

*
**

Խալիք. (Ալէքսանդրապոլ Տպարան Գէորգ Ս. Սանոյեանցի 1908) մի փոքր վէպ է՝ երկասիրութիւն Արթ. Տ. Լամանուէլ Քահ. Նազարեանցի՝ առնուած հոգեւորական և ընտանեկան կեանքէ: Դերին գլխաւոր անձն է՝ Տէր Յովակիմ քահանայ՝ Ռոդկէնը իւր ծուխին, զոհն՝ Մարգարիտ, «հալալ կաթնակեր աղջիկ...» իսկական մարգարիտ (էջ 69): Վէպիս նպատակն է եղած անարդար գործով ցուցնել ամուսնալուծութեան չար հետեանքները, և դարուս մէջ երեքսած ախտերու մարմնացումներն մատնանշելով՝ անհրաժեշտ երեցնել անմիջական դարմանները:—Վէպս ունի և այլ բազմակողմանի օգուտներ ընթերցողին վրայ և զրուած է աւելի ժողովրդական դասուն համար:

*
**

Իմամար, (Պատմական հետազոտութիւն. Տպարան «Շիրակ» Ալէքսանդրապոլ 1906) կը ներկայանայ առջինիս լուրջ մի երկասիրութիւն հանրութեան ծանօթ «Հաննէշին»-ի հեղինակին: Կ'արժէ ընթեռնուլ երբ Օսմանեան Պետ մը կ'անշջանայ... իւր կրօնից ֆէրվայոյն և կը բարձրանայ արքունական զահոյից վրայ 33 տարինը բանտարկեալ մը: Շահեկան է ընթեռնուլ «Տաւր պատկերներն Թուրքահայերի կեանքից»,

«Վիւքեալայի զաղտները»,

«Խե կարապետ»,

«Շինոց» և այլ իւր օգտաշատ երկերը:

*
**

Հեղինակ է «Կրօնների Պատմութիւն»-ի արժանապ. Երուսնդ Վ. Տէր-Մինասեանց (Տպ. յ.Ղմիսթին 1909): Յառաջաբան արդէն մեզ կը ծանուցանէ թէ ազգին մէջ չգտնուելով դասականութեան համար կրօնից պատմութեան մատեան մը, կ'ըսէ արգոյ հեղինակը, «ստիպեցին մեզ սուղագրութեան յանձնել մեր երկու տարուայ աշխատանքի պտուղը կրօնների պատմութեան մասին, որ և դնում ենք հայ ըն-